



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Պատերազմի շեփոր՝ խաղաղության նոտաներով

Այո՛, խաղաղությունը ցանկալի կացություն է հատկապես հետպատերազմյան ժամանակաշրջանում: Պատերազմի հետեւանքով հատկապես պարտված կողմը կրում է ծանր կորուստներ, իսկ հանրությունը հոգեբանորեն եւ ֆիզիկապես պատրաստ չէ կրկին ապրել այդ ծանրությունը եւ ամեն կերպ փորձում է կանչել խաղաղությունից: Անառարկելի փաստ է, որ խաղաղությունը կարող է նպաստել երկրի բարեկեցությանը, զարգացմանը եւ բարգավաճմանը: Խաղաղության եւ համերաշխության են ձգտում համամարդկային գաղափարներն ու բոլոր ազգային համախմբումները: Այս բոլոր տքնաչան ձգտումներով եւ մաքառումներով հանդերձ՝ արի ու տես, որ մարդկային պատմության գերակշիռ մասը գրվել է գրվում է հենց պատերազմների մասին, այլ ոչ թե խաղաղության: Ե՞րբ է խախտվում խաղաղությունը. միգուցե բառախաղ թվա, բայց հենց խաղաղություն հաստատելու համար: Խաղաղությունը խախտողը հավատացած է, որ նոր հաստատված խաղաղությունը կայուն է լինելու, եւ այդպես շարունակ:

Այսպիսով, բոլորը ձգտում են կայուն խաղաղության, իսկ խախտվում է այն, երբ «մանրուքները» վեճի առարկա դառնալու ժամանակ լուծումներ չեն գտնվում, որտեղ էլ թաքնված է լինում սատանան: Այստեղ ծագում է յուրաքանչյուրի հզորության, պատմական իրավունքի, պայմանավորվածությունների, օրենքների վերծանման եւ կարեւորագույն հարցը՝ հավասարակշռությունների ստեղծման եւ պահպանման խնդիրը:

Այս լուսի տակ «խաղաղության դարաշրջան» հորջորջող ձախավեր քաղաքականությունն այլ բան չէ, քան մեկ անգամ եւս նվաստանալու եւ ոչ շատ հեռվից լսվող մոտալուտ պատերազմի շեփորների ձայն. չեն քննարկվում մանրուքները, չեն հանրայնացվում, չեն հիմնավորվում եւ, վերջապես, չեն ծառայում հավասարակշռման, այլ այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ այլընտրանքն աղետն է՝ պատերազմը: Այդպիսով, օրեցօր ոչ թե կայունացնում ենք թվացյալ խաղաղությունը, այլ քայլ առ քայլ մոտենում ենք պատերազմին:

Նախ թշնամին, հենց «խաղաղության դարաշրջան»-ի ճարտարապետների վկայությամբ, պատրաստ չէ դրան, դեռ ավելին՝ պատրվակներ է փնտրում ոչ թե խաղաղության, այլ նոր պատերազմ սկսելու համար: Թշնամի պետության ղեկավարը դեռ չի փոխել իր գիմնավորական համագրեւտը եւ բռնազավթված տարածքներ յուրաքանչյուր այցի ժամանակ ճոճում է բռունցքը, հնչեցնում սպառնալիքներ՝ նոր գիշումներ կորզելու ակնկալիքով: Իսկ դրան զուգահեռ՝ ականատեսն ենք լինում թշնամու անհագուրդ ախորժակին՝ անսահմանափակ խաղաղասիրությամբ տրվելու ցանկությունը: Ցանկություն, որն այսօր ի հայտ է գալիս հայրենի իշխանությունը զբաղեցնող անհատների յուրաքանչյուր անհեթեթ արտահայտությամբ ու ծամածռությամբ՝ սկսած ՀՀ նախագահից, վարչապետից, մինչեւ նախկինների նախկիններից սերված եւ նորահայտ վեցստացողներով:

Հավասարակշռություն եւ դրա արդյունքում խաղաղություն կարելի է հաստատել միայն մեկ պարագայում, երբ, ինչպես արցախցին է ասում, «կըռքեք նրիաշ տանք», երբ Ադրբեյջանը հասկանա, որ չի վայելելու մեր հայրենիքը, երբ աշխարհին ապացուցենք, որ մենք չենք ընդունում պարտադրված կապիտուլյացիան եւ մեր իրավունքների համար պատրաստ ենք պայքարելու:



ՀՀԴ խմբակցությունը դեմ է քվեարկել 2021թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը

Հունիսի 30-ին կայացած Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նիստի օրակարգում ընդգրկված էր նաեւ 2021թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Խորհրդարանական երկու՝ «Հայ Հեղափոխական Դաշնակցություն», «Արցախի ժողովրդավարական կուսակցություն» խմբակցությունները դեմ են քվեարկել բյուջեի կատարման հաշվետվությանը, «Արցախի Արդարություն» խմբակցությունը չի մասնակցել քվեարկությանը, կողմ են քվեարկել «Ազատ հայրենիք-ԵՄԴ», «Միասնական հայրենիք» խմբակցությունները: Խորհրդարանը 25 կողմ, 4 դեմ ձայների հարաբերակցությամբ հաստատել է նախորդ տարվա բյուջեի կատարողականը:

Նախքան քվեարկությունը՝ խմբակցությունները ներկայացրել են 2021թ. բյուջեի կատարման վերաբերյալ իրենց կարծիքները: Ստորեւ ներկայացնում ենք ՀՀԴ խմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանի ելույթը.

«Պետական բյուջեի մասին օրենքը եւ դրա կատարողականներն ամեն տարի քննարկում ենք Ազգային ժողովում, մեր եզրակացությունն ենք ներկայացնում ու նշում ենք, որ որպես թիվ մեկ ֆինանսատնտեսական հիմնական փաստաթուղթ՝ պետական բյուջեն արտացոլում է այն մարտավարությունն ու ռազմավարությունը, որը կառավարությունը կիրառում է պետության առջեւ ծառայած հիմնական մարտահրավերները, խնդիրները լուծելու առումով: 2021թ. պետական բյուջեն ընդունվել է հետպատերազմյան իրողությունների շրջանակում, եւ մենք, հաշվի առնելով այդ հանգամանքը, առաջարկել էինք չտապել եւ թեկուզ մեկ ամիս ուշ ընդունել, բայց հիմնական մարտահրավերները, առաջնահերթությունները ֆիքսել էլ անցնել առաջ:

Ցավոք սրտի, ինչպես միշտ՝ մեր տեսակետը հաշվի չի առնվել եւ արագորեն ընդունվել է բյուջեի նախագիծը, հետագայում՝ «կարկատաններ», փոփոխություններ, բայց Եականը միայն դա չէ: Եականն այն է, որ բազմաթիվ անգամ մենք տարբեր տեղերից, այդ թվում՝ նաեւ այս ամբիոնից ֆիքսել ենք, որ հետպատերազմական իրողությունները հաշվի առնելով՝ մեր երկրի առջեւ ծառայած հիմնական մարտահրավերները հիմնականում անվտանգային են: Առաջինն անվտանգության հարցն է, երկրորդը՝ կարգավիճակի հարցը, երրորդը՝ հումանիտար աղետի հասցված Արցախի Հանրապետության բնակչության սոցիալական խնդիրների լուծումը, որը նույնպես անվտանգային հարց է: Ցավոք, 2021թ. բյուջեի ընդունումն ու կատարողականը այս հիմնական մարտահրավերների պատասխանը չեն տալիս: Այս «ափալ-թափալ» գործելաոճը պատերազմից մեկ-երկու տարի անց այլեւս չի հա-

մապատասխանում իրականությանը:

Այսօր նշվեց, որ խստացնելու են վերահսկողությունը բյուջետային ծախսերի նկատմամբ, եւ Արայիկ Հարությունյանն անգամ նշեց, որ Ազգային անվտանգության ծառայությանն է հանձնարարվել վերահսկել: Դրանից հետո իմ գործընկեր Դավիթ Իշխանյանը շեշտեց, որ Արտակ Բեգլարյանը հանդիպել է ոչ միայն ՀՀ արտաքին գործերի նախարարի, այլ նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահի հետ, այսինքն՝ իր գործառնություններից դուրս արտաքին քաղաքական գործունեությամբ է զբաղվում: Հիմա կարող ենք ասել հումանիտար եւ այլ հարցերով է հանդիպել, բայց սա է իրականությունը: Մենք ամենամեծ անվտանգային խնդիրն ունենք, եւ ԱԱԾ-ն իր գործառնությունները լիարժեք իրականացնելու փոխարեն զբաղվում է տնտեսական հարցերով՝ այն դեպքում, երբ ունենք բազմաթիվ ստուգող, վերահսկող մարմիններ՝ Հաշվեքննիչ պալատ, ֆինանսական վերահսկողություն:

Հաջողում է այն կառավարությունը, որը համակարգային իմաստով կարողանում է խնդիրներ լուծել: Մեզ մոտ արդեն պարզ չէ, թե ով ինչով է զբաղվում, մասնավոր նախագահի հրամանը կա, թե ով իրավունք ունի զբաղվելու արտաքին քաղաքականության ոլորտով: Այդ գործառնություն իրականացնում են նախագահի աշխատակազմը եւ արտաքին գործերի նախարարությունը:

Մենք միացել ենք քաղաքացիական պաշտպանության ոլորտին հատկացվող գումարների ավելացման առաջարկին: 2020թ. մեկ մլրդ դրամ էր նախատեսված, համարյա ոչինչ չի արվել, 2021թ. նախատեսվել է երկու մլրդ դրամ, համարյա ոչինչ չի արվել կամ շատ անբավարար է արվել, որի պատասխանատուն ի պաշտոնե պետնախարարն է: Ամեն մարդ իր գործով չի զբաղվում ու զբաղվելու դեպքում էլ դեռ հարց է՝ կարողանո՞ւմ է հաջողել, թե՞ ոչ: Օրինակները բազմաթիվ են, եւ ընդամենը մի քանի օրինակ ներկայացրի: Ես այս օրինակներով ոչ թե անպայման ուզում եմ քննադատական խոսք հնչեցնել, այլ ուզում եմ ներկաների ուշադրությունը հրավիրել ավելի արդյունավետ գործելակերպի վրա:

Պատասխանատվություն, արհեստավարություն, նպատակայնություն: Սրանք այն հիմնական սկզբունքներն են, որոնք ունենում է ցանկացած հաջողած կառավարություն: Պետք է ասել, որ այս կառավարությանն անգամ ամենամեծ ցանկության դեպքում նման բաներից որեւէ մեկը չենք կարող վերագրել, ուստի ՀՀԴ խմբակցությունը դեմ է քվեարկելու 2021թ. բյուջեի կատարողականին:

Համալրվել են ՀՅԴ Արցախի կառույցների շարքերը

Հունիսի 19-ին Նիկոլ Դումանի տուն-թանգարանում կազմակերպվել էր երդման եւ խոստման մեծ արարողություն: Այն մեկնարկել է ՀՅԴ քայլերգով:

Արարողության ընթացքում 4 նորագիրներ համալրել են ՀՅ Դաշնակցության, 31-ը՝ ՀՅԴ Արցախի երիտասարդական միության, իսկ 56-ը՝ ՀՅԴ Արցախի պատանեկան միության շարքերը:

Երդման արարողության կնքահայրը ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Արթուր Մոսիյանն էր, երիտասարդական միության խոստման արարողությանը՝ Սերգեյ Շահվերդյանը:

Պատանեկան միության խոստման արարողության կնքահայրերն էին ՀՅԴ Արցախի Մարտունու կոմիտեի ներկայացուցիչ Մասիս Սուլեյմանյանը, ՀՅԴ Արցախի Ասկերանի շրջանի կոմիտեի ներկայացուցիչ Սուրիկ Թովմասյանը, դաշնակցականներ Շանթ Զարաֆճյանը, Գեորգ Իսկաչյանը:

Ավանդույթի ուժով, նաեւ կարգով՝ մինչեւ երդում տալը Ա. Մոսիյանը նորագիրներին հարցրեց, թե արդյո՞ք պատրաստ են ամբողջովին նվիրվելու Դաշնակցության գաղափարախոսությանը, ինչին ի պատասխան՝ նորագիրներն անվարան պատասխանեցին՝ այո:

Պատերազմից հետո ՀՅԴ Արցախի կառույցների շարքերի անընդհատ ընդլայնումը փաստում է, որ երիտասարդները Դաշնակցության հետ են կապում իրենց, հետեւաբար՝ նաեւ հայրենիքի փառավոր ապագան:

Դաժան ու դժվարին ճանապարհով դեպի հայ ժողովրդի հարատևություն, ազատ, անկախ ու միացյալ Հայաստան. այս գիտակցումով են նորագիրներն այսօր միացել կառույցներին:

Արարողությունից հետո ՀՅԴ Արցախի ԿԿ անդամ Ալյոնա Գրիգորյանը պատանիներին ու երիտասարդներին ծանոթացրել է տուն-թանգարանին, ինչպես նաեւ ներկայացրել Նիկոլ Դումանի գործունեության մասին:

Այնուհետեւ տեղի է ունեցել ազգային կերակրատեսակների հյուրասիրություն ազգային երգերի ու պարերի ուղեկցությամբ, կազմակերպվել են ժամանցային խաղեր:

Շուրջ 8 տարի ՀՅԴ Արցախի երիտասարդական ընտանիքին անդամակցող, ՀՅԴ Արցախի երիտասարդական միության Մարտունու «Արթուր Աղասյան» խմբի անդամ Սյուզաննա Ստեփանյանը, ով համալրել է ՀՅԴ Արցախի կառույցի շարքերը, «Ապառաժ»-ի հետ գրույցում նշեց, որ այս ամբողջ տարիներին անդամակցելով ՀՅԴ Արցախի երիտասարդական միություններին՝ կարողացել է հասկանալ, թե ինչ է իրական հայրենասիրությունը՝ ոչ թե խոսքերով, այլ գործով:

«Մեր խմբապետը եղել է Արցախի հերոս, Ոսկե արծիվ շքանշանակիր Արթուր Աղասյանը, ով շատ խստապահանք խմբապետ էր, սիրում էր կարգ ու կանոն, ամեն ինչ անում էր, որպեսզի այստեղի պատանիները եւ երիտասարդներն իմանան մեր նախնիների պատմությունը, իմանան, թե որտեղից է գալիս հայ ազգը, ինչ պատմություն ունի, իսկ 2016-ին փոքրամարմին այդ հսկան ցուցաբերեց բացառիկ արիություն՝ փրկելով իր զինակից ընկերների կյանքերն ու պաշտպանելով հայրենիքի սահմանները: 2020-ին սանձազերծված պատերազմում եւս Արթուրն առաջնազօնում էր, սակայն, ցավոք, այս անգամ կյանքի գնով ստիպված եղավ պաշտպանել մեր հայրենիքը: Հենց ՀՅԴ երիտասարդական ընտանիքն առիթ դարձավ, որպեսզի համախմբվեց Արթուրի շուրջ, ծանոթանանք նրա երկրանուն ու նրա օրինակով հասկանանք, թե ինչպես է դրսևորվում սերն առ հայրենիք եւ ազգ», - ասել է Ս. Ստեփանյանը:

Նրա խոսքով՝ երիտասարդական միությունն ազգային գաղափարի շուրջ է համախմբել իր նման տասնյակ երիտասարդների, որոնց հետ միասնական ընտանիք են դարձել:

Անդրադառնալով ՀՅԴ Արցախի կառույցին միանա-

լու իր որոշմանը, Սյուզաննան նշեց, որ այդ պատասխանատու որոշումը կայացնելիս շատ չի տատանվել, քանի որ երկար ժամանակ է ունեցել երիտասարդական միության ներսում ծանոթանալու ՀՅԴ գաղափարախոսությանն ու ավագ ընկերների գործունեությանը:

«Ես դեռ վաղուց էի կայացրել ՀՅԴ շարքեր անցնելու որոշումս, քանի որ Դաշնակցությունն ու նրա գաղափարախոսությունը իմ երկրանունի մի մասն են եւ միշտ էլ կմնան: Դրանից զատ գիտակցում եմ, որ մեզնից յուրաքանչյուրը պարտավոր է գործել ու պայքարել հանուն Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստանի կերտմանը, եւ հատկապես այս օրերին մենք պարտավոր ենք համախմբվել այդ գաղափարի շուրջ, որը Դաշնակցության պայքարի առանցքն է: Դաշնակցականները չեն վախենում դժվարություններից: Վկան 2020թ. մեր ընկերների ակտիվ մասնակցությունն էր պատերազմական գործողություններին, իսկ այժմ նաեւ Հայաստանի սրտում տարվող պայքարը՝ հանուն Հայաստան-Արցախի, որի արդյունքում մեր ընկերների մի մասը քաղաքնապարկային կարգավիճակով փակված է բանտերում», - նշել է Ս. Ստեփանյանը:

ՀՅԴ Արցախի պատանեկան միության Նորագյուղի «Պետո» խմբի անդամ Ավագ Ավագյանը, ով խոստացել է հավատարիմ լինել դաշնակցական պատանու

մեր պատմությունը եւ ավելի շատ սիրում այն», - ասել է նա:

ՀՅԴ Արցախի պատանեկան միության Ստեփանակերտի խմբի անդամ Անի Ղուլյանն էլ, ով խոստման արարողությամբ դարձել է ՀՅԴ Արցախի երիտասարդական միության անդամ, նշել է, որ ՀՅԴ երիտասարդական ընտանիքում ձեռք է բերել նոր ընկերներ, նոր գիտելիքներ, իսկ երիտասարդական միությանն անդամակցելով նա պատասխանատվություն է ստանձնել՝ արդեն ինքն էլ աշխատել ու գործել այն գաղափարների շուրջ, որի համար մյուս երիտասարդներն են միացել միությանը:

ՀՅԴ Արցախի պատանեկան միության Վանքի խմբի անդամ Մարթա Զինգարյանը մեզ հետ գրույցում նշեց, որ պատանեկանին անդամագրվելով նա ձեռք է բերել շատ գաղափարակից ընկերներ:

«Հայրենասիրությունը եւ ազատ հայրենիք ունենալու գաղափարը ավելի խորն է սերմանվել իմ մեջ, եւ դա իմ ավագ ընկերների շնորհիվ է: Մեր այս փոքրիկ, բայց հզոր ընտանիքում տիրում է հայրենասիրության մթնոլորտը: Այստեղ բոլորիս գերագույն նպատակը հայրենատեր լինելն է: Ազատ հայրենիք ունենալու ձգտումը ստիպում է մեզ մաս կազմել ՀՅԴ երիտասարդական ընտանիքին եւ քայլել դեպի անկախությունն տանող բարդ ճանապարհով», - ասել է Ս. Զինգարյանը:



Խոսելով ՀՅԴ երիտասարդական միությունն անցնելու որոշման մասին՝ նա նշեց, որ այդ պատասխանատու քայլն իր համար ընդհանրապես դժվար չէր կատարելը, այլ հակառակը՝ ուրախալի էր, քանի որ այն ամենն, ինչ ստացել է ինքը պատանեկանի շարքերում իր ավագ ընկերներից, այժմ կարող է եւ պետք է փոխանցի իր կրտսեր ընկերներին:

Նույն խմբի Անդամ Անի Լազարյանը, ով ընթերցողին հայտնի է իր կազմակերպած գեղարվեստական միջոցառումներով ու բեմականացումներով, նշել է. «Երբ համալրեցի պատանեկան միության շարքերը, չէի մտածում, որ այսքան կսիրեմ ու կնվիրվեմ այս մեծ ընտանիքին: Պատանեկան միությունը մի հրաշալի միջավայր էր, ընտանիք, որտեղ յուրաքանչյուրս ունեինք նպատակ հայրենիքի համար անձնվեր գործ անելու: Պատանեկան միությունն ինձ շատ բան տվեց. նոր ընկերներ, նոր ծանոթություններ, նոր մտքեր, գաղափարներ եւ դրանք իրագործելու հնարավորություններ: Այս ամենի մեջ իրենց մեծ դերն են ունեցել մեր միության անդամները, մեր վարիչները, ովքեր օգնել, աջակցել ու իսկական հայրենիքին արժանի գավակներ լինելու օրինակ են ծառայել յուրաքանչյուրիս համար»:

Անին նույնպես համալրել է ՀՅԴ ԱԵՄ-ի շարքերը՝ տեսնելով ՀՅԴ երիտասարդական ընտանիքի կատարած գործերը, նրանց ունեցած հայրենասիրությունը, ընկերական միջավայրը, ջերմ մթնոլորտն ու հայրենասնվեր գործը:

«Պատանեկան միությունից արդեն անցել եմ երիտասարդական միության շարքեր. անցումը դժվար էր, որոշումը՝ պատասխանատու, բայց երբ հասկացա, որ ես դրանով միայն կնպաստեմ հայրենիքիս բարօրությանը, այդ փաստն ինձ ստիպեց կատարել այդ քայլը եւ անդամակցել երիտասարդական միությանը», - ասել է նա:

Արսեն Գեորգյանը, ով նույնպես Վանքի խմբից է, անկեղծացել է՝ նշելով, որ պատանեկան միությանն անդամակցելով՝ բացահայտել է հետաքրքիր տեղեկություններ Դաշնակցության եւ նրա պատմության մասին:

«Ձեռք եմ բերել գաղափարակից շատ ընկերներ, որոնց հետ ցանկություն ունեմ մաս կազմելու 131-ամյա կուսակցության հայրենասնվեր գործերին, ուստի միացա երիտասարդականի շարքերին, որպեսզի պայքարեմ բոլոր տեսակի խտրականությունների ու անարդարությունների դեմ», - ասել է Ա. Գեորգյանը:

Վահագն ԽԱՉՈՒՐՅԱՆ

Բույսերի պաշտպանության տեսանկյունից մեր գործը պատերազմից հետո ավելի է դժվարացել

ԱՅ գյուղատնտեսության նախարարության եւ «Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն, ՅՅԴ Արցախի ԿԿ անդամ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ Սուրեն Շինդյանի հետ «Ապառաժ»-ը գրուցել է ՊՈԱԿ-ի գործունեության, առկա խնդիրների, գյուղատնտեսական ոլորտին վերաբերող մի շարք հարցերի շուրջ:

«Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գործառնությունները

- «Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը ԱՅ գյուղատնտեսության նախարարության ենթակայության տակ գործող պետական ոչ առևտրային կազմակերպություն է: Հիմնական գործառնությունը գյուղատնտեսական նշանակության տարածքներում բույսերի վնասի գնահատումն է, տարբեր վնասատուների, հիվանդությունների տարածման հետ կապված մոնիտորինգը, որի հիման վրա համապատասխան զեկույցներ ենք տալիս նախարարությանը եւ անհրաժեշտության դեպքում կազմակերպվում են պայքարի միջոցառումներ: Պատվերի ձեռնարկը պետական ծրագրեր են մեր հիմնարկի միջոցով իրականացվում:

Շատ դեպքերում նախարարությունը թունաքիմիկատների կամ այլ զնումներ կատարում է, տրամադրում է «Բույսերի պաշտպանության ծառայությունը», իսկ ծառայությունը շրջաններից եկած հայտերի հիման վրա, նախարարի հրամանով թունաքիմիկատները տրամադրում է շրջանների գյուղաբաժիններին եւ տեղերում իրականացվում են պայքարի միջոցառումներ:

Պայքարում ենք հիմնականում բզեզի, մկանման կրծողների, մարգագետնային թիթեռնիկի եւ այլ վնասատուների դեմ: Երկու տարի առաջ Արցախում տարածվել էին մետաքսագործ կոչվող թրթուրները, որոնք մեծ վնաս էին պատճառել անտառներին ու բուսածածկ այլ տարածքների:

Մենք անտառապատ տարածքներում պայքարի միջոցառումներ չենք իրականացնում, բայց անտառամերձ գյուղատնտեսական նշանակության տարածքներում, որտեղ մետաքսագործը վնաս է տվել, իրականացրել ենք որոշակի աշխատանքներ:

Հացահատիկային դաշտերի ճանապարհամերձ հատվածներում հրդեհների համար անվտանգ շերտ ենք ստեղծում. խոսքը ճանապարհի 2 կողմերից կամ, եթե հնարավորություն չկա, միակողմանի՝ մոտ 5-6 մետր լայնությամբ անվտանգ շերտի մասին է: Այդ շերտը թույլ չի տալիս, որպեսզի հրդեհները տարածվեն հացահատիկային դաշտերում:

Հողերի անալիզի լաբորատորիա ունենք, որտեղ հողի բերրիության տարրերի անալիզներ ենք իրականացնում: Հիմնականում հողի բերրիության չորս ցուցանիշներ՝ ֆոսֆոր, կալիում, ազոտ եւ հումուս ենք ստուգում եւ հողօգտագործողներին համապատասխան սերտիֆիկատ տրամադրում իրենց հողի բերրիության, որակի հետ կապված: Դրա մեջ նշվում են նաեւ պարարտացման այն մոտավոր նորմաները, որոնք հնարավորություն են տալիս հողը

հասցնել գյուղատնտեսական նշանակության բույսերի աճի, բերքատվության համար բավարար վիճակի:

Նաեւ ավելացնեմ, որ տարվա ընթացքում գյուղատնտեսությամբ զբաղվող բազմաթիվ ֆերմերներ են դիմում մեզ մասնագիտական խորհրդատվություն ստանալու համար: Մեր մասնագետներն ախտորոշում են հիվանդությունը, տալիս համապատասխան խորհրդատվություն, շատ դեպքերում մենք ենք անձամբ տեղում խորհրդատվություն տրամադրում:

Ծառայության առջև ծառայած խնդիրները, պատերազմի գործոնը

- Ծառայության խնդիրները պատերազմից առաջ եւ դրանից հետո փոփոխության չեն ենթարկվել: Մենք շարունակում ենք նախապատերազմյան մեր գործունեությունը: Թյուր կարծիք կա, որ եթե գյուղատնտեսական նշանակության հողերը քչացել, տարածքները



փոքրացել են, բնականաբար մեր գործը պիտի թեթեւանա, բայց բույսերի պաշտպանության տեսանկյունից մեր գործն ավելի է դժվարացել: Եթե նախկինում ունեինք ընդարձակ տարածքներ եւ դրանցից ապահովում էինք թեկուզ ցածր բերքատվությամբ բերք եւ այն բավարարում էր մեր ներքին պահանջարկին, ներկայումս խնդիրն ավելի մեծ է՝ այն առումով, որ պետք է այդ փոքր տարածքներից ավելի մեծ բերքատվություն ապահովել, որպեսզի կարողանանք պարենային անվտանգության հարցը լուծել: Իսկ բարձր բերքատվություն ապահովելու ամենակարգավոր միջոցառումներից մեկն էլ վնասատուների եւ հիվանդությունների դեմ ճիշտ, հիմնավորված, ժամանակին իրականացվող միջոցառումներն են:

Այդ տեսակետից «Բույսերի պաշտպանության ծառայությունը» մեծ խնդիրներ ունի լուծելու: Կարելի է, որ բնակչությունն իրագրված լինի այդ աշխատանքների մասին, որպեսզի խնդիրները լուծվեն ոչ թե այն ժամանակ, երբ հիվանդությունը բռնկված է կամ վնասատուները բավականին զարգացել են ու բերքի կորուստ է գրանցվում, այլ կանխարգելիչ միջոցառումներ իրականացվեն բույսերի պաշտպանության համար:

Վերջին երկու տարում հողօգտագոր-

ծողների կողմից հետաքրքրվածություն է նկատվում: Եթե նախկինում անալիզի նմուշները վերցնում էինք եւ մշակողները չէին հետաքրքրվում իրենց հողի վնասի արդյունքով, հիմա այդ առումով դրական տեղաշարժ կա:

Մենք այդ ծառայությունը սեփականաշնորհված հողերի համար անում էինք անվճար, իսկ վարձակալած հողերի համար վճարովի էր, պատերազմից հետո մի տարի վարձակալած հողերի անալիզի համար վարձավճար չէինք պահանջում: Հիմա նկատում ենք, որ շատ մարդիկ իրենք են դիմում այդ աշխատանքը կատարելու համար, չնայած մեր մասնագետներն առանց որեւէ ակնկալիքի կատարում են իրենց աշխատանքը:

Շենքային պայմանների, մասնագետների, սարքավորումների խնդիր

- Ունենք շենքային պայմանների, լաբորատորիայի հետ կապված խնդիր-

Տեղումների ազդեցությունը բերքատվության վրա

- Տեղումների շնորհիվ դրական արդյունքներ գրանցվեցին հատկապես հացահատիկային մշակաբույսերի համար: Կունկետ հունիս ամսվա տեղումներն այնքան էլ մեծ արդյունավետություն չունեն, դրանք հիմնականում կարող են դրական ազդել բանջարաբուստանային գարնանացան մշակաբույսերի վրա, բայց դրանք էլ հիմնականում ոռոգովի տարածքներում են մշակվում:

Իսկ դրանից առաջ՝ ապրիլ-մայիս ամսվա տեղումները բավականին դրական են ազդել, մասնավորապես հացահատիկային մշակաբույսերի բերքատվության վրա, որովհետեւ աշնանային եւ ձմեռային երաշտային ժամանակահատվածը բացասական ազդեցություն ունեցավ: Իհարկե, ոչ բոլոր դաշտերի վրա են բավարար արդյունքներ գրանցվել, բայց մեծ հաշվով տեղումները բերքատվության բարձրացման հետ կապված դրական ազդեցություն են ունեցել:

Գյուղատնտեսության հանդեպ ուսանողների հետաքրքրվածության մասին

- Ուսանողների հետաքրքրվածության առումով կարող եմ ասել, որ, ցավոք սրտի, շատ քչերն ունեն հետաքրքրություն այս մասնագիտության հանդեպ: Կան ուսանողներ, որոնք հետաքրքրություն ունեն ու փորձում ենք ուղղորդել, օգնել մասնագիտական հմտություններ ձեռք բերելու հարցում: Օրինակ, խելացի ուսանողներից մեկը, որը հետաքրքրված էր իր մասնագիտությունը խորությամբ ուսումնասիրելու առումով, երրորդ կուրսից մեզ մոտ աշխատանքի տեղավորվեց:

Իհարկե, ոլորտը գրավիչ չէ առաջին հերթին ցածր աշխատավարձերի պատճառով: Այս պահի դրությամբ ագրոնոմի մասնագետի թափուր պաշտոն կա, որովհետեւ ոչ մեկը պատրաստ չէ պետական հիմնարկում 100 000 դրամ աշխատավարձով աշխատել: Իսկ մասնագետների պատրաստման հարցը մեր կրթական համակարգի ընդհանուր խնդիրն է:

Ցավոք, տարբեր մասնագիտությունների համար ընդունելության քննություններում ոչ բավարար գնահատականներ ստացած ուսանողները վերջին տարբերակով դիմում են գյուղատնտեսական մասնագիտությունների համար եւ, բնականաբար, ոչ բավարար գիտելիքներ, թույլ ունակություններ ունեցող աշակերտները դառնում են տվյալ համալսարանի ուսանողներ:

Այդպիսի ուսանողների հետ աշխատելն էլ է բարդ, որովհետեւ ի սկզբանե նրանք այլ մասնագիտություն են նախընտրել, հետաքրքրություն չունեն ագրոնոմ մասնագիտության նկատմամբ, դժվար է սեր առաջացնել դեպի այդ մասնագիտությունը, որովհետեւ նա ստիպված է ընտրել այդ մասնագիտությունը:

Հատուկեմտ ուսանողներ են, ովքեր ի սկզբանե որոշում են կայացրել ընդունվել տվյալ մասնագիտությամբ, հետաքրքրություն ունեն ու հաճույքով սովորում են:

Հարցազրույցը՝ Տարեիկ ԱՐԱԶՍԱՆՅԱՆԻ

Աշխատանքի որակի վրա շենքային պայմանների ազդեցությունը

- Եթե շենքային պայմանները նորմալ չեն, հասկանալի է, որոշ չափով ազդում է աշխատանքների ընթացքի վրա: Բայց այս դեպքում փորձում ենք շենքային պայմաններն անտեսել, որպեսզի աշխատանքի արդյունքի վրա չազդի:

Նժդեհյան գաղափարախոսության ոգով դեպի նժդեհյան սրբազան ուխտավայրեր

Թորգոմագարմ մեր ազգը, որ բազմիցս դժոխքի հատակը տեսել էր երկրի երեսին, այսօր կրկին աղետաբեր ժամանակներ է ապրում: Եվ այսօր, առավել քան երբևէ, երբ վիրավոր են մեր մարմինն ու հոգին, ազգային Ռզին սնուցող ու դյուցազնացնող հրաշագործներ են պետք:

Անառարկելիորեն այդպիսին է մեր ազգային գաղափարախոսության շահակիր ու ռազմի բոցաշունչ աստված հիշեցնող հայ մեծագույն այրերից մեկը՝ Գարեգին Նժդեհը: «Ուր էլ ես երբ էլ մեռնեմ, հավատա՛, իմ ազի՛ց ժողովուրդ, որ արտաքին վտանգներից ժամանակ իմ անհանգիստ հոգին այցի ես օգնության պիտի փութա իր հայրենի աշխարհին եւ աներեւութաբար քո բանակներին առաջնորդե՛...»:

Հայոց պատմության արեւմտի օվկիանոս, մեր նվիրական հերոսների շարքում իբրեւ գաղափարական եւ կազմակերպական առաջնորդ վեր է հանում Գարեգին Նժդեհի կերպարը:

Նժդեհը մեր պատմության այն եզակի դեմքերից է, որի մեջ ներդաշնակորեն միաձուլվել են զինվորականն ու մտածողը, ազգային բարոյախոսն ու քաղաքական գործիչը եւ որն իր պատմաստեղծ կյանքով հաստատաբար դասվում է հայոց առաջնագույն մեծերի շարքին:

1955 թ. Ռուսաստանի Վլադիմիր քաղաքի բանտի խոցուն բանտախցերից մեկում քայքայված առողջությամբ մի բանտարկյալ կնքեց իր մահկանացուն: Ինչպես հարյուրավոր հանգուցյալների, նրան էլ առանց որևէ սզո ծիսակարգի հուղարկավորեցին Վլադիմիրի քաղաքային գերեզմանոցում: Հետո տեղադրեցին մի անշուք ցուցանակ, որի վրա գրված էր. «Տեր-Հարությունյան Գարեգին Եղիշի. 1886-1955, N 825»: Այդ մարդը հայ ազգային հերոս, սպարապետ Գարեգին Նժդեհն էր:

1983թ. լեզվաբան, պրոֆեսոր Վարազ Առաքելյանի մոտ միտք հղացավ Հայաստան տեղափոխելու Նժդեհի աճյունը: Այդ դժվարին առաքելությամբ Վլադիմիր է մեկնում Նժդեհի թոռնուհու ամուսինը՝ Պավել Անանյանը, փնտրում-գտնում գերեզմանը, հետո վերադառնում էրեւան: Մի քանի օր անց դարձյալ մեկնում է այնտեղ, ծանոթանում երկու վստահելի ռուսի հետ ու նրանց օգնությամբ քանդում է շիրիմը: Անցորդները տարակուսանքով նայում էին օր ցերեկով քաղաքատարկյալի գերեզմանը քանդող մարդուն, բայց, բարեբախտաբար, ո՛չ հարցուփորձ արեցին, ո՛չ էլ ոստիկանություն կանչեցին: Մեկ առ մեկ գտնելով եւ ուսապարկում թաքցնելով ոսկորները՝ Անանյանը ժամանում է Մոսկվա, իսկ այնտեղից գնացրով՝ էրեւան:

1983-ին հերոսի աճյունն իր հողում էր: Մի խումբ հայրենասերներ սկսում են հուղարկավորության վայր որոնել, բայց կարծես փակուղու առջեւ են կանգնում: 80-ականների սկիզբը խորհրդային ռեժիմի ամենադաժան տարիներն էին, եւ դժվար չէր կապել, թե ինչ կաներ ԿԳԲ-ն, եթե իմանար այդ հայրենասերները ձեռնարկման մասին: Մասունքները կոչնչացվեին, իսկ մասնակիցները կձերբակալվեին ու կաքոնդվեին: Նույնիսկ ամենահայրենասեր մարդիկ, սարսափելով հաշվեհարդարից, հրաժարվում էին գոնե ժամանակավոր իրենց տոհմական գերեզմանոցներում Նժդեհի մասունքները թաղելուց:

Դերասան Սոս Սարգսյանը դիմում է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին՝ խնդրելով նրա թույլտվությունը՝ սպարապետին սբ. Գայանե եկեղեցու բակում՝ հենթի գերեզմանի մոտ թաղելու համար: Վեհափառը մեկ օր մտածելուց հետո պատասխանում է, որ Նժդեհը մեծ հերոս է եւ արժանի է Էջմիածնում ամփոփվելու, բայց ժողովուրդը նրա գերեզմանն ուխտատեղի կդարձնի, եւ իշխանությունները կիմանան այդ մասին: Որքան ողբերգական էին «Լեռնահայաստանի արծվի» բանտարկությունն ու մահը, կրկնակի ողբերգական դարձավ նրա սուրբ աճյունի ամփոփման ողիսականը: Մոտ երկու ամիս արկղի մեջ դրված ոսկորները պահվում են Գուրգեն Արմաղանյանի, ապա Վարազ Առաքելյանի նկուղներում՝ ընտանիքի անդամների աչքից պահածոների տարաներով քողարկված:

Ի վերջո, որոշվում է մինչեւ հարմար տեղ գտնելը մասունքները պահ տալ հուստուփ լեռան լանջին: Մի առիթով Նժ-

դեհն ասել էր. «Երբ ինձ սպանված տեսնես՝ դիակ թաղիր հուստուփի ամենաբարձր կատարին, որ ինձ երես ե՛ւ Կապանը, ե՛ւ Չնդեվազը, ե՛ւ Գողթանը, ե՛ւ Գեղվաձորը...»:

1983թ. հոկտեմբերի 7-ին աճյունից մի նշխար ամփոփվում է հուստուփ լեռան լանջին՝ Կոզնի կղզված աղբյուրի մոտ:

Նժդեհյան գաղափարախոսությունը հայրենապաշտ մի խումբ արցախցիներիս հուստիսի տարավ դեպի նժդեհյան սրբազան ուխտավայրեր դարձած հուստուփ, Գլաձորի Ս. Սպիտակավոր վանքը:

Ուխտագնացությունների մեկնարկը տրվեց հենց հուստուփից: Չնայած դժվարամատչելի ճանապարհին՝ լեռը ուխտավորների պակաս չի ունենում:

Մեկ օր հուստուփի լանջին խարույկի շուրջ նժդեհյան գաղափարախոսության վերաբերյալ հետաքրքիր քննարկումներ անցկացնելուց, ազգային երգեր երգելուց, պարելուց եւ վրաններում գիշերելուց հետո՝ գիշերվա թանձր խավարում լապտերներով ճանապարհվեցին՝ նվաճելու Սյունյաց սրբազան լեռան բարձունքը: Հայրենասիրական երգերը, որոնք իրար հերթ չտալով երգում էինք, միայն ու միայն ավելի էին ոգեւորում եւ առաջ մղում՝ մոռացնել տալով ֆիզիկական հոգնածությունն ու դժվարանցանելի ճանապարհը:

Անվերջ թվացող ճանապարհից հետո վերջապես հասանք Կոզնի աղբյուրին, որտեղ իրար էին միախառնվել հայրտության, մեղավորության, ամոթի եւ այլ զգացումներ... Մենք Նժդեհի մոտ էինք:

Բ ա Ր - ձ ու ն ք ն առ ջ ւ ո մ է ր: Ե վ ս մ ւ կ ժ ա մ, ե ն այ ն կ հ ա ղ - թ ա հ ա Ր վ ւ ր մ ի ա ս ն ա կ ա - ն ու լ յ ա ն ու կ ա մ ք ի շ ն ուր - հ ի վ: Վ ր ջ ջ ա յ ւ ե ն վ ա մ ճ վ ա մ է ր ա ն մ ա տ չ է ի թ վ ա ճ ո ղ բ ար - ձ ու ն ք ւ: Երեւացող հզոր տեսարանը մի պահ քարացրել էր բոլորին: Մենք ամպերի վրա էինք ու վայելում էինք հայրենի լեռների անաղարտ օդը: Կարծես վերացել էինք ու կտրվել իրականությունից՝ մոռանալով դեպի բարձունք տանող ճանապարհին հայտնված բոլոր դժվարություններն ու խոչընդոտները: Խուստուփից վերցրած աներեւակայելի զգացողություններն ու տպավորիչ հուշերը դեռ երկար կշարունակեն լինել մեր ուղեկիցը:

«Չանգեզուրի արծվի» «Եթե չգամ, իմացեք, որ չկամ» պատգամը բարեբախտաբար չիրականացավ, որովհետեւ վաղուց Նժդեհն իր տանն է՝ Հայաստանում:



Table with 4 columns: Գնահատման վիճակի մասին հաշվետվություն, Շաբ դրամ, 01.12.2021թ., 31.12.2021թ., 31.12.2022թ. The table lists various financial and operational metrics for the company.

Table with 4 columns: Հանձնարարական ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, Շաբ դրամ, 2021թ., 2022թ. The table provides a detailed breakdown of financial results for 2021 and 2022.